

Հանգուցային անվանումների գրանցման ընդհանուր պայմաններ

1. Սույն պայմանները սահմանում են «ՎիվաՄեյ-ՄՏՍ» և այլ ապրանքային նշանների ներքո գործող «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության (ստորև՝ «Օպերատոր») կողմից, որը լիազորված է գրանցող համապատասխան իրավատիրոջ կողմից, համակարգչային ցանցերի համաշխարհային միասնական համակարգում (աստորև՝ «Ինտերնետ») հանգուցային անվանումների (ստորև՝ «Հանգուցային անվանում») գրանցման (ստորև՝ «Ծառայանություն») ընդհանուր պայմանները (այսուհետ՝ «Ընդհանուր պայմաններ»):
2. Սույն պայմանները նախատեսվում են «Ինտերնետ Հանրություն» հասարակական կազմակերպության կողմից սահմանված Հանգուցային Անվանման գրանցման կանոններին համաձայն, եւ որեւէ հակասության դեպքում վերջիններս կգերակայեն Ընդհանուր պայմանների նկատմամբ:
3. Հանգուցային անվանման գրանցման համար պատվիրատու հանդիսացող անձը (ֆիզիկական կամ իրավաբանական անձ) (ստորև՝ «Պատվիրատու»), ստորագրելով Հանգուցային անվանման գրանցման հայտը (ստորև՝ «Հայտ»), պարտավորվում է հետեւել եւ պահպանել վերը՝ 1. եւ 2. կետերով նախատեսված Ընդհանուր պայմանների եւ կանոնների պահանջները:
4. Հանգուցային անվանման գրանցման եւ/կամ վերագրանցման նվազագույն ժամկետը սահմանվում է 1 (մեկ) տարի:
5. Հանգուցային անվանման գրանցման եւ/կամ վերագրանցման արժեքը ներկայացված է Օպերատորի պաշտոնական վեբ-կայքում (www.mts.am):
6. Վերը՝ 5.-րդ կետով նախատեսված Հանգուցային անվանումների գրանցման եւ/կամ վերագրանցման արժեքը վճարվում է որպես կանխավճար՝ հետեւյալ կարգով.
 - 6.1. Նոր գրանցվող Հանգուցային անվանումների համար վերը՝ 5.-րդ կետով նախատեսված արժեքը վճարվում է գրանցման պահին՝ կանխիկ կամ բանկային փոխանցմամբ՝ նախքան Ծառայության մատուցումը,
 - 6.2. Գրանցված Հանգուցային անվանումների վերագրանցման համար վճարումը կատարվում է ոչ ուշ, քան վերջնաժամկետի լրանալուց 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:
7. Վերը՝ 6.2. կետով նախատեսված ժամկետում չվճարելու դեպքում Հանգուցային Անվանումը 30 (երեսուն) օրացուցային օրերի ընթացքում կգտնվի ոչ ակտիվ (on hold) վիճակում, ապա ևս 15 (տասնհինգ) օրացուցային օր փակ վիճակում, որից հետո այն ենթակա է ազատ գրանցման երրորդ անձանց կողմից:
8. Հանգուցային Անվանման գրանցման կամ վերագրանցման վճարումները կատարվում են ինչպես կանխիկ, այնպես էլ Օպերատորի հաշվեհամարին բանկային փոխանցմամբ, ընդ որում սահմանված գումարը համարվում է վճարված Կատարողին հանձնված կամ Կատարողի բանկային հաշվեհամարին հաշվեգրված լինելու պահից:
9. Հանգուցային անվանումների գրանցումը եւ/կամ վերագրանցումն իրականացվում է Օպերատորի սպասարկման կենտրոններում Պատվիրատուի կողմից լրացված

գրանցման/վերագրանցման հայտը հաստատվելուց եւ համապատասխան վճարումն իրականացվելուց հետո՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

10. Հանրահայտ հապավումները, ազգային արժեք ունեցող անունները, ճանաչված ապրանքանիշների անունները, հանրաճանաչ մարդկանց անունները կամ մականունները չեն կարող գրանցվել որպես Հանգուցային անվանում՝ առանց համապատասխան փաստաթղթային հիմքի/իրավատիրոջ համաձայնության:
11. .am տիրություն Հանգուցային անվանումը կարող է պարունակել միայն լատիներեն 0-9 թվերը, '-' (գծիկ) և ASCII անգլերեն տառեր: .hay Հանգուցային անվանումը կարող է պարունակել միայն լատիներեն 0-9 թվերը, '-' (գծիկ) և Unicode Armenian տառեր, բացառությամբ 'և' (0587) տառի:
12. Պատվիրատուի վավերապայմաններում եւ տվյալներում փոփոխությունների առկայության դեպքում Օպերատորը բոլոր անհրաժեշտ փոփոխությունները կատարում է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
13. Պատվիրատուն հավաստում է, որ Հանգուցային անվանումը, որի գրանցման/վերագրանցման համար դիմում է, չի խախտում երրորդ անձանց մտավոր սեփականության իրավունքները, ինչպես նաև պատասխանատվություն է կրում բոլոր հետևանքների համար, որոնք կարող են առաջանալ պահանջվող Հանգուցային անվանման գրանցման արդյունքում:
14. Պատվիրատուն պարտավոր է Օպերատորին ներկայացնել Հայտով պահանջվող ճշգրիտ տվյալները եւ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:
15. Պատվիրատուին արգելվում է օգտագործել Հանգուցային Անվանումն անօրինական կերպով զանգվածային հաղորդագրություններ (spam) ուղարկելու, միջէթնիկական, կրոնական տարաձայնություն առաջացնելու, միջազգային ահաբեկչության մեջ ներգրավելու, բռնության, պոռնկագրության, թրաֆիքինգի խթանելու կամ համակարգչային վիրուսներ տարածելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը, «Ինտերնետ Հանրություն» հասարակական կազմակերպության կողմից սահմանված կանոններին հակասող այլ գործողություններ իրականացնելու նպատակով:
16. Պատվիրատուն սույնով պարտավորվում է պահպանել հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները եւ չձեռնարկել որեւէ գործողություն, որով կարող են խախտվել հակակոռուպցիոն օրենսդրության պահանջները, կապված սույն Ընդհանուր պայմաններով նախատեսված իր իրավունքների եւ պարտականությունների հետ, այդ թվում (բայց չսահմանափակվելով)՝ չկատարել առաջարկ, չտալ համաձայնություն, խոստում, չիրականացնել ոչ օրինական վճարումներ, ներառյալ (բայց չսահմանափակվելով) կաշառքը՝ փողի կամ ցանկացած այլ տեսքով, որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, ներառյալ (բայց չսահմանափակվելով)՝ առեւտրային կազմակերպություններին, իշխանության եւ ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, մանսավոր ընկերություններին եւ նրանց ներկայացուցիչներին:
17. Պատվիրատուի կողմից սույն Ընդհանուր պայմանների 16.-րդ կետով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում, Օպերատորն իրավունք ունի միակողմանի արտադատական կարգով հրաժարվելու Ընդհանուր պայմանների կատարումից: Օպերատորը չի հատուցում Պատվիրատուի վնասները սույն Ընդհանուր պայմանների՝ սույն կետի համաձայն լուծման դեպքում:

18. Օպերատորն իրավունք ունի Պատվիրատուի կողմից վճարման պարտավորության խախտման դեպքում միակողմանի լուծել վերջինիս հետ պայմանագիրը:

19. Օպերատորն իրավունք ունի Պատվիրատուի կողմից վերը՝ 15. Կետով սահմանված պարտավորության խախտման դեպքում միակողմանի լուծել վերջինիս հետ պայմանագիրը:

20. Օպերատորն իրավունք ունի հրաժարվել Ծառայություն մատուցելուց, եթե.

20.1. տվյալ Հանգուցային Անվանումը արդեն իսկ գրանցված է երրորդ անձանց կողմից,

20.2. տվյալ Հանգուցային Անվանման գրանցումը հակասում է «Ինտերնետ Հանրություն» հասարակակն կազմակերպության կողմից սահմանված Հանգուցային Անվանումների գրանցման կանոններին,

20.3. տվյալ Հանգուցային Անվանման գրանցումը կարող է վնաս հասցնել Օպերատորին, «Ինտերնետ Հանրություն» հասարակական կազմակերպության կամ այլոց իրավունքներին;

21. Պատվիրատուն իրավունք ունի գրանցված Հանգուցային անվանման հետ կապված իրեն առնչվող տվյալներում պահանջել կատարելու ցանկացած թույլատրելի փոփոխություն՝ ներկայացնելով համապատասխան փաստաթղթերը:

22. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Հանգուցային Անվանման սպասարկման ընթացքում առաջացած ընդհատումների և/կամ վերաթարմացումների ուշացման համար:

23. Օպերատորը պատասխանատվություն չի կրում ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ժամկետանց կատարման համար, եթե դա հետևանք է նրանից անկախ վրա հասած անհաղթահարելի հանգամանքների (ֆորս մաժոր), ինչպիսիք են տարերային աղետներ, հրդեհներ, ջրհեղեղներ կամ այլ աղետներ, կառավարության գործողություններ, երկրում արտակարգ դրություններ, հասարակական անկարգություններ, ապստամբություններ, պատերազմներ և գործադուլներ: Նման հանգամանքների առաջացման դեպքում Օպերատորը պարտավորվում է հանգամանքների առաջացումից հետո 5-օրյա ժամկետում տեղեկացնել Պատվիրատուին պայմանագրային իր պարտավորությունների կատարման անհնարինության մասին, որից հետո Կողմերը փոխադարձ համաձայնությամբ դադարեցնում են պայմանագրի գործողությունը կամ այն երկարացնում համապատասխան ժամկետով:

24. Իրենց պարտավորությունների չկատարման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ գործող օրենսդրությանը համաձայն:
25. Հայտում ընդգրկված բոլոր տվյալները, ինչպես նաև Հանգուցային Անվանման գրանցման Ժամկետը, բացառությամբ ծածկագիրը, չեն համարվում գաղտնի և կարող են զետեղվել բաց տեղեկատուներում կամ այլ կերպ հասանելի դառնալ ցանկացած անձանց, եթե Պատվիրատուն չի ընտրել “Պահպանել տվյալների գաղտնիությունը” լրացուցիչ ծառայությունը և ներկայացրել Հայտում: Այդ դեպքում հանրությանը հասանելի բաց տեղեկատուներում Պատվիրատուի տվյալների դաշտում հասանելի են միայն DNS տվյալները:
26. Պատվիրատուի կողմից կատարված վճարումները ենթակա չեն վերահաշվարկի և/կամ վերադարձի՝ անկախ սույն պայմանագրի դադարեցման հիմքերից և պայմաններից:
27. Ծառայությունների հետ կապված՝ Կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
28. Կողմերը հնարավորինս պետք է ջանան լուծել ցանկացած վեճ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով, իսկ փոխադարձ համաձայնությամբ չլուծվելու դեպքում վեճերը ենթակա են Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանների ընդդատությանը: